Ձև N 4

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ (N 2 ձև)

2. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներում ներգրավվող ավտոմոբիլների լիցենզավորման կարգին համապատասխանության մասին տեղեկանք (N 3 ձև)

3. Ավտոմոբիլների տեխնիկական անձնագրի (հաշվառման վկայագրի) պատճենը

4. Ավտոմոբիլի սեփականության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման դեպքում դրա օրինականությունը հաստատող փաստաթղթի պատճենը

5. Ավտոմոբիլն այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ օրինականությունը հաստատող և հերթական փորձարկումները հավաստող փաստաթղթի պատճենը

6. Ավտոմոբիլի ուղեսրահում տեղադրված սակաչափիչի վերաբերյալ արտադրողի կողմից տրված տեխնիկական անձնագրի կամ սակաչափիչի ստուգաչափման մասին իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքի (եզրակացության) պատճենը

7. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի անհրաժեշտ պայմանները բավարարող տարածքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի, իսկ 1-3 ավտոմոբիլ ունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ հավաքակայանին ներկայացվող անհրաժեշտ պայմանների ապահովման պայմանագրի պատճենները՝ բացառությամբ մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերերի, որոնք ներկայացնում են ավտոմոբիլի տեխնիկական և վարորդի առողջական վիճակի ամենօրյա նախաուղերթային զննման աշխատանքների ապահովումը հավաստող փաստաթղթերի պատճենները (լիցենզավորված կազմակերպության հետ կնքված նախաուղերթային սպասարկման պայմանագիր, մեխանիկի և բուժաշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիր և այլն):

8. Պետական տուրք վճարման անդորրագրի բնօրինակը

| | |
|---|---|
| 900005163747 | 25 000 դրամ |

1. Ներկայացվող բոլոր պատճենները, ներկայացնող անհատ ձեռնարկատերերի կողմից նշագրվում է <Իսկականի հետ ճիշտ է>, ստորագրվում և կնքվում է (կնիքի առկայության դեպքում):

2. Տրանսպորտի բնագավառում գործունեության լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են հետևյալ հասցեով՝ 375010, ք. Երևան, Նալբանդյան փող. 28 (Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ):
3. Բոլոր ներկայացվող նյութերը պետք է ձևակերպվեն հայերեն լեզվով և մեքենագրված տեքստով: